ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 փետրվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

21
(2687)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է ԱԱԾ-ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ուրբաթ օրն Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանին հրավիրել են Ազգային անվտանգության ծառայություն՝ իր նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման մասով ցուցմունք տալու: Ներկայացվել են Գլխավոր դատախազի կողմից ներկայացված երեք դրվագներով միջնորդությունները եւ, մեր տեղեկություններով, Սեյրան Օհանյանին հայտնել են, որ նա մեղադրվում է վերոնշյալ արարքների կատարման համար, ուստի պետք է ցուցմունք տա: Ի պատասխան՝ Սեյրան Օհանյանն ԱԱԾ քննիչին գրավոր ընդամենը մի քանի բան է հայտնել. առաջադրված մեղադրանքը չի ընդունում եւ որեւէ մեկի հետ որեւէ շահադիտական գործողություններ չի իրականացրել: Նկատենք, որ այսքանից հետո նրան մեղադրանք է առաջադրվել, եւ խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին: Նշենք, որ վաղեմության ժամկետով կարճման ենթարկված գործերով պետությունը ռեսուրսներ է ծախսում (քննություն է անում), որի մասին խոսեց նաեւ դատախազը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սեյրան Օհանյանը հաստատեց, որ ուրբաթ օրը՝ փետրվարի 10-ին, հրավիրվել է ԱԱԾ, որտեղ հայտնել է, որ մեղադրանքը չի ընդունում եւ որեւէ մեկի հետ որեւէ շահադիտական գործողություններ չի իրականացրել: Հիշեցնենք, որ փետրվարի 9-ին ՀՀ ազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, «Իզմիրլյան» ԲԿ նախկին տնօրեն Արմեն Չարչյանի եւ խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլտվություն տվեց:

Մարտի 26-ին ՏԻՄ ընտրություններ կանցկացվեն Շիրակի մարզի Անի համայնքում եւ Սյունիքի Սիսիան խոշորացված համայնքում: Կուսակցությունների եւ դաշինքների ընտրական ցուցակների առաջադրման եւ գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով պետք է ներկայացվեն փետրվարի 9-19-ն ընկած ժամանակահատվածում: «Ժողովուրդ» օրաթերթին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներից հայտնեցին, որ դեռեւս որեւէ կուսակցությունից կամ դաշինքից դիմում չեն ստացել: Մեզ հաջողվեց պարզել, որ ՏԻՄ ընտրություններին մասնակցության, ինչպես նաեւ թեկնածուի առաջադրման հարցում դեռեւս միայն «Քաղաքացիական պայմանագիր»-ը վերջնական որոշում ունի: «Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ կուսակցության վարչության փոխնախագահ Վահագն Ալեքսանյանը հայտնեց, որ Սիսիանում իրենց թեկնածուն համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արմեն Հակոբջանյանն է: Նշենք, որ վերջինս նաեւ ՔՊ խմբակցության պատգամավոր Կարեն Համբարձումյանի ազգականն է: Անի համայնքում նույնպես ՔՊ թեկնածուն համայնքապետի ղեկավարի պաշտոնակատար Արման Սարիբեկյանն է: «Ամբողջական ցուցակը կհրապարակվի առաջիկա օրերին»,-հավելեց Ալեքսանյանը: Ընդդիմադիր թեւում, սակայն, ի տարբերություն իշխանության, անորոշ վիճակ է. ընդդիմադիր քաղաքական ուժերը դեռ չեն կողմնորոշվել՝ մասնակցելու են ՏԻՄ ընտրություններին, թե ոչ: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի նախագահ Ռուբեն Թադեւոսյանը նշեց, որ հարցը դեռ քննարկվում է, վերջնական որոշում չկա: Գեղամ Մանուկյանը նույնպես նշեց, որ ՀՅԴ-ն դեռ թեկնածու չունի: «Ցանկացած ՏԻՄ ընտրություններից առաջ «Դաշնակցություն»-ում քննարկումներ են գնում: Այս պահին ՏԻՄ ընտրություններին մասնակցելու մասով դեռ որոշում չունենք, որոշում ունենալու դեպքում կհայտարարենք»,- ասաց Մանուկյանը: «Հայրենիք» կուսակցության քարտուղար Սոս Հակոբյանն էլ ասաց, որ Անի համայնքում չեն մասնակցելու ընտրություններին, իսկ Սիսիանում մասնակցության հարցը դեռ քննարկվում է: Տեղեկացանք, որ «Հայաստան» դաշինքի նախկին պատգամավոր Արթուր Սարգսյանը, որը նախկինում ղեկավարել է Սիսիան համայնքը, եւս մտադիր է առաջադրվել: Ավելին՝ երեկ երեկոյան Արթուր Սարգսյանը այս հարցով նաեւ ժողով է հրավիրել, որպեսզի հայտնի իր վերջնական դիրքորոշման մասին: Նրան հենց «Հայաստան» դաշինքն էլ կառաջադրի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սիսիանում պատրաստվում է առաջադրվել նաեւ էլցանցերի պետը՝ Ջիվան Մարգարյանը, որը նախկինում ՀՀԿ-ի թեկնածուն էր:



Հունվարի 19-ին Ազատ գյուղի կացարանի վերածված տներից մեկում հրդեհից զոհված 15 զինծառայողների մահվան գործով ծնողներից մի քանիսն արդեն հարցաքննվել են: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ այն, ինչ հրապարակային հայտարարել են ծնողները, նույնը պնդել են նախաքննական մարմնում: Հիշեցնենք, որ նախաքննական մարմինը 15 զինծառայողների մահվան գործով նշանակել է թմրաբանական փորձաքննություն: «Ժողովուրդ» օրաթերթը փորձել էր անձամբ տեղեկությունը պարզել ՀՀ քննչական կոմիտեից, որտեղից էլ հաստատել էին. «Այո՛, նշանակված է նման փորձաքննություն, բայց եզրակացությունը դեռ չենք ստացել: Նշանակվել են նաեւ հրդեհատեխնիկական, պայթյունատեխնիկական, նյութագիտական, ճգաբանական, հետքաբանական, շինարարատեխնիկական, ապրանքագիտական համալիր փորձաքննություն, որի եզրակացությունը եւս չի ստացվել»: Բանն այն է, որ սպայի եւ մահացած 15 զինվորների հարազատների մոտ կասկածներ կան, թե ինչու մինչ կրակը կհասներ սենյակ, տղաները դուրս չեն եկել այրվող կացարանից եւ փրկել իրենց կյանքը: Անգամ սպան բանավոր ասել է քննիչներին, որ իր համար կասկածելի էր այն երեւույթը, որ երբ ինքը գոռացել, աղաղակել է, թե՝ հրդեհ է, արթնացե՛ք, դո՛ւրս եկեք, տղաները չեն արձագանքել, այսինքն՝ անգիտակից են եղել:

Հայաստանում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը զգալի ավելացել է: Եթե 2021 թվականին Հայաստանում կացության կարգավիճակ ստացել է Ռուսաստանի 766 քաղաքացի, ապա 2022 թվականին նրանց թիվը կազմել է 8562: Տեղեկացնենք, որ այս թիվը մեծացել է նախորդ տարվա փետրվարի 24-ից սկսած ռուս-ուկրաինական ռազմական գործողություններից հետո, երբ մեծ թվով ռուսներ եկան Հայաստան: Ավելին՝ ավելացել է նաեւ ՀՀ քաղաքացիություն ստացող ՌԴ եւ Ուկրաինայից ներգաղթած հայերի թիվը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հայաստանում կացության կարգավիճակ ստացել է նաեւ Ուկրաինայի 385 քաղաքացի: Այս թիվը եւս, 2021 թվականի հետ համեմատ, ավելացել է: Տեղեկացնենք, որ երբ մարդը տեւական ժամանակ բնակվում է Հայաստանում եւ ցանկանում է բիզնես գործունեությամբ զբաղվել, ստանում է կացության կարգավիճակ: Բացի այդ, ՌԴ քաղաքացիները Հայաստանում կարող են աշխատել նաեւ առանց կացության կարգավիճակի, որի համար պետք է ունենալ Հայաստանում աշխատելը հավաստող աշխատանքային պայմանագիր, որով ՌԴ քաղաքացին կարող է հաշվառվել ժամանակավոր բնակության հասցեով ու ստանալ հանրային ծառայությունների համարանիշ՝ հարկային պարտավորությունները կատարելու ու աշխատողի իր իրավունքներից օգտվելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական տվյալներից տեղեկացավ, որ նախորդ տարվա ընթացքում Հայաստանում հաշվառվել է Ռուսաստանի 3326, Ուկրաինայի՝ 146 քաղաքացի:

ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԹԱԼԱՆ՝ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Հայաստանը փետրվարի 11-ին հումանիտար օգնություն էր ուղարկել Թուրքիա: Հումանիտար օգնություն տեղափոխող բեռնատարները սահմանն անցել էին 1993թ.-ից փակված Մարգարայի կամրջով եւ ուղեւորվել դեպի երկրաշարժից տուժած շրջան:

«Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով զրուցել է թուրքագետ Անդրանիկ Իսպիրյանի հետ:

-Պարոն Իսպիրյան, մեր իշխանության ներկայացուցիչները պնդում են, որ Հայաստանի այս հումանիտար քայլը դրական ազդակ կարող է լինել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում: Ի՞նչ եք կարծում այս մասով, ինչպե՞ս սա կանդրադառնա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վրա:

-Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում որեւէ խոչընդոտ չկա, խոչընդոտն իրականում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ է: Թուրքիան Հայաստանի հետ սահմանը չի բացում եւ Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման ուղղությամբ ռադիկալ քայլերի չի գնում՝ հանուն Ադրբեջանի: Նա սպասում է այն հարմար պահին, որ Հայաստանը եւ Ադրբեջանը ստորագրեն խաղաղության համաձայնագիրը, նոր քայլեր կձեռնարկի այս ուղղությամբ: Իսկ թե որքանով են նույնը Մարգարայով օգնություն տանելն աղետային գոտի եւ խաղաղության պայմանագիրը, ինչքանով կա ընդհանրություն այս գործընթացներում, բնականաբար, չկա, ուստի անտեղի հույսեր են, թե սա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը կնպաստի: Նույնկերպ մեկ տարուց ավելի է՝երկու երկրների բանագնացները երկխոսում են չգիտես՝ինչի շուրջ, իսկ հարաբերությունների կարգավորման գործընթացում որեւէ առաջընթաց չկա: Մինչեւ հիմա հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը բացառապես կախված է Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի ստորագրումից, այդպես էլ շարունակում է մնալ:

-Պարոն Իսպիրյան, տարբեր փորձագետներ տեսակետ են հնչեցնում, որ այս աղետալի երկրաշարժը եւ դրան հետեւած գործընթացները լուրջ հարված են հասցնելու նաեւ այդ երկրի իշխանության, մասնավորապես՝ Էրդողանի հեղինակությանը. Դուք ի՞նչ կասեք:

-Այս պահի դրությամբ նման միտում կա, որ երկրաշարժից հետո տեղի ունեցած այս իրավիճակը մեծ հարված էր Էրդողանի վարկանիշին: Երկրաշարժը բավականին մեծ տարածքներ է ընդգրկել, որոշ վայրերում երկրաշարժից շատ հետո են սկսել փրկարարական աշխատանքները, ինչի հետեւանքով զոհերի քանակն ավելի շատ է եղել: Բացի սա, աղետի գոտում տեղի է ունենում նաեւ զանգվածային թալան, նույնիսկ մարդկանց ձեռքերն են կտրում ոսկու գողության համար, դիակապտությամբ են զբաղվում, մարդիկ փրկարարների շորեր են հագնում, մտնում ու տներ են թալանում. այս ամենաթողությունը բավականին մեծ հարված է Էրդողանի վարկանիշին:

-Հասարակությունը մի այսպիսի քննադատություն է հնչեցնում մեր իշխանությունների հասցեին. ինչպե՞ս է ստացվել, որ Թուրքիային օգնություն ուղարկելու համար կարողացան 30 տարի փակ Մարգարայի կամուրջը մեկ օրում բացել, իսկ Արցախի մեր հայրենակիցներին օգնություն տրամադրելու համար այդպես էլ էական քայլեր չեն արվում: Դուք ինչպե՞ս կմեկնաբանեք, արդարացի՞ են այս մեղադրանքները:

-Հասարակության էմոցիոնալ վիճակը հասկանալի է, բոլորիս համար սարսափելի է, որ 120.000 արցախցի շրջափակման մեջ է, եւ չենք կարողանում օգնություն հասցնել, սակայն սրանք տարբեր իրավիճակներ են: Մարգարայի սահմանը փակող չկա, Հայաստանի ու Թուրքիայի միջեւ սահմանները ուղղակի փակ էին, եւ օգնություն ուղարկելու համար բացեցին, իսկ Արցախում լրիվ ուրիշ իրավիճակ է, ուրիշ հարց: Ինչո՞ւ մենք ակտիվ չենք նաեւ Արցախի ճանապարհի բացման հարցում, ինչո՞ւ չենք փորձում միջազգային հանրությանը ավելի շատ սեւեռել դրա վրա: Իհարկե, քայլեր արվում են, բայց ինչպես տեսնում ենք, դրանք բավարար չեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

ԿՈՌՈՒՄՊԱՑՎԱԾ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ՝ Ջերմուկում տեղի է ունեցել Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի հերթական նիստը: Մասնավորապես, պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ նիստի ժամանակ քննարկվել են հայտարարագրման համակարգին, կուսակցությունների ֆինանսական վերահսկողությանը, հակակոռուպցիոն կրթությանը վերաբերող հարցեր:

Նախ՝ նկատենք՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի հերթական նիստից բացակայել են ընդդիմության անդամները, եւ ներկաները իրենք իրենցով են քննարկել կոռուպցիայի դեմ պայքարին վերաբերող հարցերը:

2019 թվականին Նիկոլ Փաշինյանն ասել էր, որ «կոռուպցիան սարսափելի դեմքով, պոզով, պոչով կենդանի չէ»: Կոռուպցիա ասվածը պետք չէ միայն հասկանալ որպես կաշառակերություն, այն նաեւ կապ ունի հովանավորչության հետ, եւ հենց դահլիճում նստած ներկաները որեւէ կերպ կապ ունեն այդ նշված հովանավորչության հետ:

Խոսենք անուններով եւ փաստերով. նիստին մասնակցել են, օրինակ, արդարադատության ներկայիս նախարար Գրիգոր Մինասյանն ու ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը: Նախարարը հենց Անդրեասյանի կողմից հովանավորվելու արդյունքում է հայտնվել այդ պաշտոնում. նա եկել է, մյուսին էլ հովանավորել:

Մեկ այլ օրինակ է կառավարության աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ում

ավագանու անդամ եղբոր ընկերությունը հաճախ է մրցույթներում հաղթող դառնում:

Դահլիճում տեսնում ենք նաեւ նախկին պատգամավոր, ներկայումս ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանին, ում երկու որդիները բանակից ազատվել են կասկածելի հանգամանքներում, իսկ նրա կողքին էլ հենց գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն է, որը ոչ մի քայլ չի ձեռնարկել:

Հովանավորության մեկ այլ օրինակ է ՔՊ խմբակցության պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանի ամուսնու նոր պաշտոնը. Ավետ Պողոսյանը Կենտրոն վարչական շրջանի ղեկավարից հետո դարձավ ԲՏԱ փոխնախարար: ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը եւս նստած է նիստին. նրա եղբայրն աչքի ընկավ ՏԻՄ ընտրություններում, սակայն դրա մասին եւս բոլորը լուռ են:

Ստացվում է՝ կոռումպացված պաշտոնյաները մասնակցում են Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԹԱՓՈՒՐ ԵՆ

Հայաստանի պետական գերատեսչություններում կան վարչություններ եւ բաժիններ, որոնք տեւական ժամանակ է՝ աշխատողներ չունեն: Թափուր աշխատատեղեր են առկա շատ գերատեսչություններում: Որքան էլ իշխանությունները՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, փորձում են գրավիչ դարձնել պետական համակարգը, փաստ է, որ պետական գերատեսչությունների կայքերում չեն դադարում առկա թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները, քանի որ մարդիկ խուսափում են պետական աշխատանքի անցնել: Այս անգամ «Ժողովուրդ» օրաթերթը կանդրադառնա Երեւանի քաղաքապետարանին: Պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ Երեւանի քաղաքապետարանը չունի աշխատակազմի քարտուղար. Սեյրան Արզումանյանը Ժ/Պ է: Քաղաքապետարանում յուրաքանչյուր պաշտոնյայի անուն-ազգանվան վրա սեղմելիս կարող եք նաեւ տեղեկանալ նրա կենսագրական տվյալների մասին. քաղաքապետի խորհրդականների թվում նշված է Կորյուն Մկրտչյան անուն-ազգանունը, սակայն կենսագրական բոլոր տվյալները բացակայում են: Առողջապահության վարչությունը եւս ժամանակավոր պաշտոնակատար ունի՝ Յակով Ասատրյան. նրա կենսագրական տվյալները եւս բացակայում են: Ժամանակավոր պաշտոնակատարներ ունեն նաեւ Արտաքին ձեւավորման եւ գովազդի վարչությունը, Բնապահպանության վարչությունը, Գնումների վարչությունը, Եկամուտների հաշվառման եւ գանձման վարչությունը, Շինարարության եւ բարեկարգման վարչությունը, Վերահսկողության վարչությունը, Լրատվության վարչությունը, Տրանսպորտի վարչությունը, Քարտուղարությունը, Քաղաքաշինության եւ հողի վերահսկման վարչությունը: Այսինքն 26 վարչություններից12-ը ունեն ժամանակավոր պաշտոնակատարներ: Բաժիններից ժամանակավոր պաշտոնակատար ունի Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման ծրագրերի բաժինը:

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ՀՀ քննչական կոմիտեն Արցախի պաշտպանության նախկին նախարար Ջալալ Հարությունյանին 2023 թվականի տարեսկզբին երկու անգամ հրավիրել է նախաքննական մարմին, որտեղ էլ եղել են Ջինված ուժերի պաշտոնատար անձանց հետ առերեսումներ: Ասել է թե՝ քրեական գործով նախաքննությունն առերեսման փուլում է: Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմի ընթացքում Արցախի Պաշտպանության բանակը ղեկավարած Ջալալ Հարությունյանին երկու դրվագով առաջադրված մեղադրանքներից մեկը Ցորի զորամասի 20 հրետանավորների զոհվելու հանգամանքներին է վերաբերում: 44-օրյա պատերազմի օրերին ծանր վիրավորում ստացած ու այդ պատճառով պաշտոնից ազատված 47-ամյա Ջալալ Հարությունյանին առաջադրված մեղադրանքի մյուս դրվագով՝ հենց նրա գործողությունների հետեւանքով են հոկտեմբերի 7-ին՝ հակահարձակման ժամանակ, հայկական ստորաբաժանումները մարդկային մեծաքանակ ուժի ու զինտեխնիկայի կորուստ կրել, պահեստային ստորաբաժանումները դարձել են ոչ մարտունակ, զբաղեցրած կրակային դիրքերն անցել են հակառակորդի հսկողության տակ:

ԾԱԽՍԵՐԸ ԱՃԵԼ ԵՆ

2022թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին ՀՀ պետական բյուջեի ծախսերը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աճել են շուրջ 7.4%-ով: Ծախսերի աճը պայմանավորված է ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի աճերով: Ընթացիկ ծախսերի աճի տեմպը կազմել է 4.2%, իսկ կապիտալ ծախսերն աճել են 38.5%-ով՝ կազմելով 173.9 մլրդ դրամ:

Ընթացիկ ծախսերի աճի տեմպը, նախորդ ամսվա համեմատ, արագացել է շուրջ 1.4 տոկոսային կետով, իսկ կապիտալ ծախսերինը՝ դանդաղել 3.0 տոկոսային կետով: Հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի ծավալը զգալիորեն բարձր է նախորդ տարվա մակարդակից, այնուամենայնիվ, այն դեռեւս էականորեն ցածր է առաջին ինն ամիսների պլանային ցուցանիշից՝ 250.4 մլրդ դրամից, եւ կազմում է այդ պլանի ընդամենը 69.4%-ը:

Նաեւ պետական բյուջեի կատարումն է էականորեն շեղվել պլանից: Պետական բյուջեի փաստացի պակասուրդը շուրջ 262.8 մլրդ դրամով շեղվել է պլանից, որը պայմանավորված է ինչպես եկամուտների ավել հավաքագրմամբ, այնպես էլ ծախսերի թերակատարմամբ: Իհարկե, տնտեսական բարձր աճի պայմաններում հարկաբյուջետային զսպող քաղաքականության իրականացումը տեղին է, սակայն դա չպետք է իրականացվի կապիտալ ծախսերի թերակատարման միջոցով: Նշված շեղման էական մասը՝ 76.5 մլրդ դրամը, պայմանավորված է կապիտալ ծախսերի թերակատարմամբ:

ԼՍՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Փետրվարի 24-ին ՀՀ Ազգային ժողովում անցկացվելու են խորհրդարանական լսումներ: Նախաձեռնողը ՀՀ ԱԺ աշխատանքի եւ սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովն է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ խորհրդարանական լսումների ժամանակ առաջարկվում է քննարկել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Հիմնական զեկուցողը լինելու է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Ռուբեն Սարգսյանը: Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ աշխատողի համար աշխատանքային գործառույթներն աշխատանքային հարաբերությունների թերեւս ամենակարեւոր բաղադրիչն է, մինչդեռ աշխատանքային գործառույթները ներառված չեն օրենսգրքով սահմանված աշխատանքի էական պայմանների շարքում: Օրենսգրքով սահմանված չէ, թե երբ են աշխատանքային հարաբերությունները համարվում ծագած Հայաստանի Հանրապետության տարածքում, այդ հանգամանքը կարեւորվում է կոնկրետ դեպքերում աշխատանքային հարաբերությունների վրա աշխատանքային օրենսդրության գործողության ոլորտը որոշակելու տեսանկյունից: Նախագծում ամրագրվել են «բռնություններ», «աշխատանքի վայր», «աշխատանքի հիմնական վայր» հասկացությունների, ինչպես նաեւ համատեղությամբ աշխատանքի դեպքում հիմնական աշխատանքի սահմանումները:

ՆԱԽԱԳԻԾ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը Սահմանադրության փոփոխության գործընթաց է նախաձեռնում. հայտնում են նրա աշխատակազմից:

Նա ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ «նախաձեռնվել է Սահմանադրության փոփոխության գործընթաց՝ռազմական դրության ժամանակ հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում Ազգային ժողովի կողմից նախագահի ընտրության եւ դրա առանձահատկությունների վերաբերյալ»:

Փետրվարի 13-ին Արցախի Սահմանադրության փոփոխության նախագիծը ներկայացվել է Ազգային ժողովի քննարկման:

Ըստ գործող Սահմանադրության՝ նախագահի կողմից ծանր հիվանդության կամ լիազորությունների կատարման համար այլ անհաղթահարելի խոչընդոտների առկայության դեպքերում, որոնք տեւականորեն անհնարին են դարձնում նրա լիազորությունների իրականացումը, Ազգային ժողովը, Գերագույն դատարանի եզրակացության հիման վրա, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում Հանրապետության նախագահի լիազորությունները դադարեցնելու մասին, նախագահի պաշտոնը թափուր մնալու դեպքում մինչեւ նորընտիր նախագահի կողմից պաշտոնի ստանձնումը նախագահի լիազորություններն իրականացնում է Ազգային ժողովի նախագահը:

«Պատերազմի կամ արտակարգ դրության ժամանակ Հանրապետության նախագահին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել: Հանրապետության նախագահին անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ չի կարող ներկայացվել կամ քննարկվել նաեւ այն դեպքում, երբ Հանրապետության նախագահը ռազմական դրության ժամանակ հրամանագիր է ընդունել ընտրություններ չանցկացնելու վերաբերյալ»,- ասված է Արցախի Սահմանադրության մեջ:

Նկատենք՝ դեռ հունվարի 16-ին Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանը հայտարարել էր, թե Արցախում ներքաղաքական ճգնաժամ չկա:

«Չի կարելի նման բան թույլ տալ, քանի որ կա հստակ գիտակցում, որ մեր հիմնական օրակարգը ծագած հրատապ խնդիրները հաղթահարելն է ու Արցախն այս իրավիճակից դուրս բերելը», - ասել է նա՝ անդրադառնալով Արցախի ներքաղաքական կյանքի վերաբերյալ քննարկումներին:

Այդ համատեքստում նա շեշտադրել է, որ միայն շրջափակման հարուցած ճգնաժամի հաղթահարումից հետո հնարավոր կլինի անդրադառնալ ներքաղաքական հիմնախնդիրների համակարգային լուծման հարցերին:

Արայիկ Հարությունյանը կարեւորել է ներքին միասնականության պահպանումը:

Այս խոսակցություններն առաջացել էին այն բանից հետո, երբ Արցախի Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանը նախ չէր բացառել արտահերթ նախագահական ընտրությունները: Ապա սկսեցին լուրեր շրջանառվել պետնախարար Ռուբեն Վարդանյանի հնարավոր հրաժարականի վերաբերյալ, սակայն նա դա հերքեց:

«Ժողովուրդ» օրաթերթն այդ ժամանակ գրել էր, որ Արցախում անառողջ մթնոլորտ է եւ լարված ներքաղաքական իրավիճակ: Այն, որ Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի եւ պետնախարար Ռուբեն Վարդանյանի հարաբերությունները լարվել են, ակնհայտ դարձավ տարբեր դրսեւորումներով: Նախ՝Ռուբեն Վարդանյանը, Նիկոլ Փաշինյանի օրինակով, սկսեց նախկինների դեմ ատելություն գեներացնել, հագավ արդարության մարտիկի պատմուճանը, բարձրաձայնեց անարդարությունների մասին, սակայն իրականում, բացի խոսքից, որեւէ գաղափարական քայլ, ռազմավարական տեսլական չներկայացրեց ու գործնական որեւէ քայլ չարեց, փոխարենը սկսեց Արցախի շահի դեմ բաներ խոսել: Նա հայտարարեց, թե Լաչինի ճանապարհը ամբողջովին փակ չէ, սնունդ հասնում է ինչ-որ ճանապարհով, հայտարարեց, թե Արցախը երբեք միասնության համար չի պայքարել եւ այլն:

Իրականում Վարդանյանն անզոր եղավ անգամ կառավարական կաբինետ ձեւավորել, ամիսներով թափուր մնացին նախարարի պաշտոնները, ի վերջո Արայիկ Հարությունյանի հավատարիմները նշանակվեցին նախարարներ:

Հիմա էլ, փաստորեն, այս ամենից զատ, հենց Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն է սահմանադրական փոփոխություններ նախաձեռնել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՋՄԸ

Իշխանական եւ ընդդիմադիր պատգամավորները փետրվարի 18-21-ը Քիշնեւում (Մոլդովա) կմասնակցեն «Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի լիագումար նստաշրջանին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ ԱԺ պատվիրակության կազմում ընդգրկված են «Եվրանեսթ» ԽՎ-ում Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, ՔՊ խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանը, Ազգային ժողովի եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, ՔՊ խմբակցության պատգամավոր Արման Եղոյանը, ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը, իշխող ֆրակցիայի պատգամավորներ Բաբկեն Թունյանը, Տաթեւիկ Գասպարյանը, Մերի Գալստյանը:

Պատվիրակության կազմում են նաեւ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Արթուր Խաչատրյանը, Աննա Գրիգորյանը եւ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը:

ԴԱՏԱԽԱԶԸ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՐԵՑ

Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Չարչյանի եւ խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու որոշում է կայացրել. այս մասին հայտնեցին ՀՀ գլխավոր դատախազությունից:

Նշենք, որ փետրվարի 9-ին ՀՀ ազգային ժողովը գաղտնի քվեարկությամբ «Հայաստան» խմբակցության պատգամավոր, «Իզմիրլյան» ԲԿ նախկին տնօրեն Արմեն Չարչյանի եւ խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու թույլտվություն տվեց:

ԿԺԱՄԱՆԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Փետրվարի 27-ից մարտի 1-ը Հայաստան կժամանի Լյուքսեմբուրգի Պատգամավորների պալատի փոխխոսնակ Ջունա Բերնարդի գլխավորած պատվիրակությունը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ, Ալեն Սիմոնյանի կարգադրությամբ, Հայաստան ժամանող պատվիրակությանը խորհրդարանում կընդունի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Սոնա Ղազարյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպի ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Դավիթ Առաքելյանը:

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

«ԻՆՍՏԱԳՐԱՄ»-Ի ԳՐԱՌՈՒՄԸ՝ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ալբերտ Տոնիկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 21-րդ փողոցի 2/3-րդ հասցեի դիմաց Արարատի մարզի Այնթապ համայնքի բնակիչ Արման Մուրադի Հովհաննիսյանի առողջությանը մարմնական վնասվածք պատճառելու ուղղակի դիտավորությամբ դանակով մեկ անգամ հարվածել է Արման Հովհաննիսյանի կրծքավանդակի ձախ հատվածին՝ պատճառելով առողջությանը ծանր վնաս:

Ալբերտ Տոնիկյանը իր կողմից տնօրինվող «Ինստագրամ» սոցիալական կայքէջում լուսանկար է հրապարակել, որի վերաբերյալ այլ օգտատերերի, այդ թվում՝ Արման Հովհաննիսյանի կողմից կատարվել են հայհոյախառն գրառումներ՝ ուղղված Ալբերտ Տոնիկյանին: Վերջինս նույն էջի միջոցով կապ է հաստատել Արման Հովհաննիսյանի հետ եւ պարզաբանում պահանջելու նպատակով առաջարկել է հանդիպել: Պայմանավորվածության համաձայն՝ 2022 թվականի հունիսի 19-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Ալբերտ Տոնիկյանը իրենց տան հետնամասում հանդիպել է Արման Հովհաննիսյանին եւ նրա ընկերոջը՝ Էդգար Արեւշատի Ավետիսյանին, եւ պարզաբանում է պահանջել: Քանի որ հաղորդագրության բովանդակությանը ամբողջությամբ ծանոթ չի եղել, վերջիններիս առաջարկել է սպասել, մինչեւ հեռախոսը տանից վերցնի եւ, որպես իր խոսքերի ապացույց, հաղորդագրությունը ցույց տա, սակայն Արման Հովհաննիսյանը եւ Էդգար Ավետիսյանը չեն սպասել Ալբերտ Տոնիկյանին, այլ գնացել են Էդգար Ավետիսյանի բնակության հասցե եւ այնտեղ զբաղվել շինարարական աշխատանքներ կատարելով: Դրանից հետո Ալբերտ Տոնիկյանը խնդրել է Արման Հովհաննիսյանին, որպեսզի հեռացնի իր կողմից արված գրառումը, սակայն վերջինս հրաժարվել է հեռացնել՝ պատճառաբանելով, որ իր գրառումը Ալբերտ Տոնիկյանին չի վերաբերում, տեղյակ չի եղել, որ տվյալ էջը նրա կողմից է տնօրինվել: Նույն օրը՝ ժամը 23:00-ի սահմաններում, Ալբերտ Տոնիկյանը նույն հարցի շուրջ զրուցելու նպատակով կրկին Արման Հովհաննիսյանին առաջարկել է հանդիպել: Մինչեւ հանդիպումը Ալբերտ Տոնիկյանը Արման Հովհաննիսյանի առողջությանը վնաս պատճառելու ուղղակի դիտավորությամբ տանից իր հետ վերցրել է խոհանոցային դանակ եւ աջ ձեռքում պահած գնացել Արման Հովհաննիսյանին ընդհառաջ: Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի 21-րդ փողոցի 2/3 հասցեի դիմաց Ալբերտ Տոնիկյանը եւ Արման Հովհաննիսյանը հանդիպել են իրար, ներկա է եղել նաեւ Էդգար Ավետիսյանը: Ալբերտ Տոնիկյանի ձեռքում նկատելով դանակը՝ Արման Հովհաննիսյանը հարցրել է, թե ինչու է իր հետ դանակ վերցրել, որին ի պատասխան՝ Ալբերտ Տոնիկյանը իր հետ վերցրած դանակով Արման Հովհաննիսյանի առողջությանը վնաս հասցնելու ուղղակի դիտավորությամբ մեկ անգամ հարվածել է վերջինիս կրծքավանդակի ձախ հատվածին՝ պատճառելով առողջությանը ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Սապետ Վանոյի Սաքանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի ապրիլի 18-ին Վանաձոր քաղաքի Իսահակյան 13-րդ շենքի 10-րդ բնակարանում իրեն պատկանող բջջային հեռախոսով մուտք է գործել «Ֆեյսբուք» սոցիալական ցանց, այնուհետեւ «Ռոբերտ Քոչարյանի աջակիցներ, հավաքվեք» կայքէջի խմբում՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի վերաբերյալ կիսված մեկնաբանության տակ, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հասցեին, քաղաքական հայացքներով պայմանավորված, կատարել է բռնություն գործադրելու հրապարակային կոչ պարունակող գրառում:

ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ ԿՈՉ

«Պետք է դիմահար կրակով ոչնչացնեին, հենց բարձրացավ մայթի վրա. կվիրավորվեր, թե կզոհվեր, կարեւոր չէ». սա ՀՀ առողջապահության նախկին նախարար, ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Արսեն Թորոսյանի խոսքերն են: Նա այս խոսքերը մեկնաբանություն էր թողել Երեւանի ավագանու «Իմ քայլը» խմբակցության անդամ Աշոտ Սարգսյանի գրառման տակ. խոսքը «Համեր»-ով վարորդի դեպքի մասին է:

Վերջինս մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների՝ «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ. Բյուզանդի, Վ. Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված 8 քաղաքացիական մեքենա: Այնուհետեւ նա երթեւեկել է Կառավարության վարչական շենքի հանդիպակաց՝ ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության 3 ավտոմեքենա: Եվ, ահա, Արսեն Թորոսյանը, որն առողջապահության նախարարն էր, ըստ էության, բռնության կոչ է անում եւ կարծիք հայտնում, թե նրան պետք է դիմահար կրակով ոչնչացնեին, հավելում՝ կարեւոր չէ՝ ողջ կմնար, թե ոչ:

Սա ասում է Արսեն Թորոսյանը՝ նույն Թորոսյանը, որը 2022 թվականի օգոստոսին խաղաղության կոչ էր անում. «Խաղաղությունն իրականում գին չունի, անգին է, ինչպես կյանքը: Կյանքն անգին է: Հակառակը պնդելը մահվան եւ պատերազմի քարոզ է»: Այսինքն՝ ընդամենը մեկ ամիս առաջ Արսեն Թորոսյանն ադրբեջանցիների հետ խաղաղության կոչ է անում՝ ասելով, թե կյանքն անգին է, մյուս կողմից՝ հենց հայ երիտասարդին դիմահար կրակով ոչնչացնելու կոչ անում:

Սա ասում է մի պաշտոնյա, որը նախկինում եղել է առողջապահության նախարար եւ ի պաշտոնե պետք է մարդասեր լիներ, սակայն հիմա հակառակ գրառումներ է անում՝ մարդկանց կյանքը բարձր չդասելով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՆԱՎՈՐՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Սասունիկ բնակավայրից թվով 10 քաղաքացիների (այդ թվում՝ 4 անչափահաս)՝ բժշկական կենտրոն տեղափոխվելու դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 412-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (Անվտանգության պահանջներին չհամապատասխանող հումքերի կամ ապրանքների շրջանառությունը, աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը):

Ըստ բուժհաստատությունից ստացված տվյալների՝ նախնական ախորոշումն է թունավորումը շմոլ գազից՝ հարցականով: Քրեական վարույթի շրջանակներում նշանակվել է տոքսիկոքիմիական փորձաքննություն, կնշանակվի նաեւ դատաբժշկական փորձաքննություն: Բուժօգնության դիմելուց շուրջ մեկ ժամ անց բոլոր 10 քաղաքացիները բուժհաստատությունից դուրս են գրվել: Կատարվում են քննչական, վարութային անհրաժեշտ գործողություններ դեպքի հանգամանքները, թունավորման հավանականությունը պարզելու նպատակով:

ԱՆՎԱՎԵՐ ԵՆ ՃԱՆԱՉԵԼ

Գլխավոր դատախազությունը 2022 թվականի հոկտեմբերի 21-ին տեղեկացրել էր, որ Հակակոռուպցիոն դատարանը 28 անձի վերաբերյալ կայացրել է մեղադրական դատավճիռ՝ կաշառքի դիմաց վարորդական իրավունքի վկայականներն ապօրինի ձեռք բերելու համար:

Վերոնշյալ անձինք մեղավոր են ճանաչվել մեղսագրվող արարքի կատարման համար եւ դատապարտվել են տարբեր չափերի տուգանքների:

Գլխավոր դատախազությունը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով, 2022 թվականի դեկտեմբերի 19-ին դիմել էր Ոստիկանություն (ներկայում՝ Ներքին գործերի նախարարություն)՝ քաղաքացիների կողմից ապօրինի ձեռք բերված վարորդական իրավունքի վկայականներն անվավեր ճանաչելու միջնորդությամբ:

Հիմք ընդունելով Հակակոռուպցիոն դատարանի դատավճիռը եւ Դատախազության միջնորդությունը՝ Ոստիկանությունը (ՆԳՆ) ուժը կորցրած է ճանաչել մեղադրյալների վարորդական վկայականները. դրանց վերաբերյալ համապատասխան նշում է կատարվել Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային ռեգիստրում:

Հիշեցնենք, որ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում հարուցված եւ Հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական գործով քաղաքացիներին մեղադրանք էր առաջադրվել այն բանի համար, որ նրանք օժանդակողի միջոցով Ճանապարհային ոստիկանության Երեւանի հաշվառմանքննական բաժնի վարորդական իրավունքի վկայականների հատկացման բաժանմունքի տեսուչին տարբեր չափերի կաշառք են տվել (մոտ 3 մլն տասը հազար դրամ)՝ ապօրինի ձեռք բերելով վարորդական իրավունքի վկայականներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 10-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 136 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԳԱՅԼԵՐԸ ԳՅՈՒՂԵՐ ԵՆ ՄՏՆՈՒՄ

Սարերում, անտառներում ձյուն է նստած, բնության մեջ վայրի գիշատիչների որսը պակասել է, նրանք որս, կեր հայթայթելու համար ավելի համարձակ են դարձել, մոտենում են Տավուշի մարզի գյուղերի սահմաններին: Նախկինում՝ տարիներ առաջ, պետությունը Որսորդմիության անդամներին սպանված յուրաքանչյուր գայլի համար ավելի քան 100 հազար դրամ պարգեւավճար էր վճարում, ինչը խթանում էր որսորդների կողմից այդ գիշատիչների որոշակի քանակի ոչնչացումը, այդ գումարը փոխհատուցում էր որսորդների կրակած գնդակների ծախսը, որսի ընթացքում նրանց չարչարանքը: Նախկինում բախտագուշակները չբեր կանանց անպտղությունն իբր բուժելու համար օգտագործում էին գայլերի էգ ձագերի սեռական օրգանները, դրա դիմաց վճարում էին որսորդներին: Դրա հետեւանքով եւս գայլերի քանակը որոշակիորեն նվազում էր: Հիմա գայլերի որսի համար պահանջարկ չկա, գայլերը բազմացել են: Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Կոթի գյուղի բնակիչ, ազատամարտիկ վետերան Դավիթ Ղազինյանը հայտնում է, որ գայլերը մտնում են Կոթի բնակավայրի ծայրամասի տները. մի քանի օր առաջ իրենց տնից մոտ 120 մետր հեռավորությամբ գտնվող Ջալնաց Չալ կոչվող թմբում ոռնում էին, դրանք իր հարեւանի խոզին փորձել են հոշոտել, հարեւանը կրակելով գայլերից մեկին վիրավորել է, գիշատիչն արյունաշաղախ փախել է: Դ. Ղազինյանի վկայությամբ՝ ավելի ագրեսիվ են շնագայլերը, որոնք ազատ շրջում են գյուղում: Դրանցից մեկը չի կարողացել դուրս գալ Դ. Ղազինյանի այգուց, վերջինիս որդի Մխիթարը կարողացել է երկաթաձողով սպանել շնագայլին, իրենց շունը զզվել, չի կերել սատկացրած շնագայլի միսը:

ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ՀԵՐԻՔՈՒՄ

Դիլիջան քաղաքի բնակիչները դժգոհում են, որ քաղաքի ներսում երթեւեկող հասարակական տրանսպորտի՝ երթուղային տաքսիների քանակը չի հերիքում: Ուղերթերում աշխատող միկրոավտոբուսների քանակը անբավարար է հատկապես շաբաթ-կիրակի օրերին: Շատ դիլիջանցիներ, գերբեռնված միկրոավտոբուս խցկվելու փոխարեն, գերադասում են քաղաքի երկար փողոցները կտրել ոտքով: Դիլիջանցիները բողոքում են միկրոավտոբուսների քանակի սակավությունից, մինչդեռ 2022 թվականի ամռանը Երեւան քաղաքում, ընդդիմության ցույցերը ցրելու համար, ոստիկաններ տեղափոխող միկրոավտոբուսների վրա կարելի էր տեսնել «Դիլիջանի համայնքապետարան» գրառումը եւ Եվրամիության աստղերը: Այդ միկրոավտոբուսները ձեռք են բերվել Եվրամիության աջակցության ծրագրով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՆՈՐ ԿԱՐԳ

ՀՀ կառավարության նիստում հավանության է արժանացել պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության եւ տնօրենի նշանակման կարգը:

Նոր կարգավորումները տարածվում են որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար հայտարարվող մրցույթի արդյունքում ծագած հարաբերության վրա:

Ներկա իրավիճակը

Գործող կարգով տնօրենների ընտրության համար հիմք է հանդիսանում 2010 թվականին ներդրված հավաստագրման գործընթացը, որը նույնական մոտեցում է բոլորի համար՝ անկախ աշխատանքային փորձից: Տնօրենի ընտրության եւ նշանակման գործընթացի մաս է կազմում հաստատության խորհրդի որոշումը, որի արդյունավետության վերաբերյալ ստացված բազմաթիվ դիմում-բողոքները հիմք են հանդիսացել կառավարման համակարգի ուղղությամբ օրենսդրական փոփոխություններ իրականացնելու համար:

Առաջարկվող լուծումներ

Նոր կարգավորմամբ հաստատության տնօրենն անցնում է նույն ընթացակարգով, ինչ նախորդ կարգով էր պահանջվում, սակայն այլ մեխանիզմ է առաջարկվում զարգացման ծրագրի ուսումնասիրման, այնուհետեւ մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիմքով նշանակման առումով: Հստակեցվել են մրցույթի մասնակցի ներկայացրած անհրաժեշտ փաստաթղթերը, զարգացման ծրագիրը փորձաքննության ներկայացնելու ընթացակարգը, մասնագիտական հանձնաժողովի ձեւավորման, գործունեության նկարագիրը, մրցույթի արդյունքների ամփոփման, բողոքարկման մեխանիզմները:

Մասնավորապես՝ սահմանվել է թափուր տեղի մրցույթի հայտարարման նոր ժամկետ, եւ հավակնորդը, հաստատված ձեւաչափին համապատասխան, տվյալ հաստատության զարգացման իր ծրագիրը պետք է ներկայացնի (այդ թվում՝ էլեկտրոնային տարբերակով) լիազոր մարմնին պաշտոնական կայքում տեղադրելու համար:

Հաստատության տնօրենը կամ տնօրենի պարտականությունները կատարողը կամ պաշտոնակատարը պարտավոր է ապահովել հավակնորդի հանդիպումը տվյալ հաստատության մանկավարժական, ծնողական եւ աշակերտական խորհուրդների հետ զարգացման ծրագիրը կազմելու համար առաջարկություններ լսելու նպատակով: Սահմանված հանդիպմանը չմասնակցելու դեպքում հավակնորդը չի կարող մասնակցել հայտարարված մրցույթին: Տնօրենը կամ տնօրենի պարտականությունները կատարողը կամ պաշտոնակատարը պարտավոր է նաեւ հավակնորդի կողմից ներկայացված գրավոր դիմումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել գրավոր անհրաժեշտ տեղեկատվությունը՝ հաստատության գործունեության վերաբերյալ:

Մրցույթն անցկացնում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ձեւավորված մասնագիտական հանձնաժողովը, որը կազմված է 7 անդամից: Հանձնաժողովում ընդգրկված են նախարարի՝ տվյալ ոլորտը համակարգող տեղակալը (բացակայության դեպքում՝ նրան փոխարինող նախարարի տեղակալը), որն ի պաշտոնե հանդիսանում է մասնագիտական հանձնաժողովի նախագահ, ինչպես նաեւ երկու ներկայացուցիչ՝ նախարարության հանրակրթության վարչությունից, եւ մեկական ներկայացուցիչներ՝ անձնակազմի կառավարման եւ իրավաբանական վարչություններից, Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոնից եւ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից:

Մասնագիտական հանձնաժողովը մշակում եւ նախարարի հաստատմանն է ներկայացնում հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշները: Հավակնորդի զարգացման ծրագիրը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, հանձնաժողովն այն ներկայացնում է փորձաքննության, որն իրականացվում է ուղղակի կամ մրցութային դրամաշնորհի արդյունքում ընտրված կազմակերպության կողմից: Փորձաքննության արդյունքում կազմակերպությունը յուրաքանչյուր զարգացման ծրագրի մասին կազմում է տեղեկանք, որը ներկայացնում է մասնագիտական հանձնաժողովին:

Կազմակերպության ներկայացրած փորձաքննության արդյունքների հիման վրա՝ մասնագիտական հանձնաժողովը քննարկում եւ 3 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան լիազոր մարմնին է ներկայացնում հավակնորդի զարգացման ծրագրի վերաբերյալ դրական կամ բացասական եզրակացություն: Եզրակացությունը ստանալուց հետո լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում եւ անցկացնում է հարցազրույց դրական եզրակացություն ունեցող բոլոր հավակնորդների հետ, որի արդյունքում կարող է հավակնորդներից մեկի հետ (եթե դրանց թիվը մեկից ավելի է) կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, բայց ոչ ավելի, քան անձի 65 տարին լրանալը:

Հարցազրույցն անցկացնում է լիազոր մարմնի ղեկավարը կամ ղեկավարի՝ տվյալ ոլորտը համակարգող տեղակալը: Հարցազրույցը տեղի է ունենում հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագրի, նրա աշխատանքային ստաժի, մասնագիտական գործունեության, կարողունակությունների եւ անձնային որակների շրջանակում: Հարցազրույցի ողջ ընթացքը ձայնագրվում կամ տեսաձայնագրվում է:

Հարցազրույցին հավակնորդներից ոչ մեկի չներկայանալու կամ հարցազրույցի արդյունքում հավակնորդներից որեւէ մեկի հետ աշխատանքային պայմանագիր չկնքելու դեպքում լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարում է նոր մրցույթ՝ կարգի պահանջներին համապատասխան:

ԿՆՇԱՆԱԿՎԻ ՏՈՒԳԱՆՔ

Անազատ եւ կիսաազատ պայմաններում վայրի կենդանիների, այդ թվում՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու գործընթացը կկանոնակարգվի: Վերջապես ՀՀ շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը որոշել է վերահսկել այս ոլորտը: Արդյունքում շրջանառության մեջ է դրվել «Անազատ եւ կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության տրամադրման կարգը սահմանելու մասին» շրջակա միջավայրի նախարարի հրամանի նախագիծը:

Ըստ ՇՄՆ-ի՝ այս խնդրի իրականացումն անհետաձգելի եւ հրատապ է դարձել 2015 թվականին միջազգային մամուլում (Daily Mail) տպագրված Գյումրու մասնավոր կենդանաբանական այգում պահվող կենդանիների թշվառ վիճակին վերաբերող աղմկահարույց հոդվածի հրապարակումից հետո: Արդեն 2023 թվականին՝ 8 տարի անց, Հայաստանի կառավարությունը որոշել է թույլտվության տրամադրման կարգ սահմանել: ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախատեսվում է ստեղծել անազատ եւ կիսաազատ պայմաններում պահվող վայրի կենդանիների, այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու թույլտվության համար մասնագիտական եզրակացության տրամադրող հանձնաժողով: Թույլտվություն կտրամադրվի միայն եթե գործունեության իրականացման վերաբերյալ ծրագիր ներկայացվի, ինչը ներառում է գործնեության իրականացման նպատակը, վայրի կենդանիների քանակը, տեսակը, այդ թվում՝ լատիներեն անվանմամբ, սեռը, հնարավորության դեպքում՝ տարիքը, կենդանու ֆիզիոլոգիական բնութագիրը, յուրաքանչյուր կենդանատեսակի համար սահմանված սննդակարգերը, պահման համար նախատեսված տարածքի չափը, գործունեության իրականացման վայրը, կենդանու բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ պայմանները, այդ թվում՝ սարքավորումների առկայությունը, տարածքի սանիտարահիգիենիկ պայմանները, պարտադիր անասնաբուժական զննումների գրաֆիկը՝ հաստատված անասնաբույժի կողմից: Ի դեպ, թույլտվությունը տրվում է 15 տարի ժամկետով: Առանց համապատասխան թույլտվության, ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կողմից անազատ եւ կիսաազատ պայմաններում վայրի կենդանիներ, այդ թվում՝ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ պահելու դեպքում կկիրառվի վարչական պատասխանատվություն:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 21 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

ՑՈՒՑԱՆԻՇՆ ԱՎԵԼԱՑԵԼ Է

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների թիվը 90.2 տոկոսով ավելացել է. եթե 2021 թվականին Հայաստան ժամանել է 875 հազար 772 զբոսաշրջիկ, ապա նախորդ տարի նրանց թիվը կազմել է 1 մլն 665 հազար 658: Գերմանիայից 2021 թվականին Հայաստան եկել է 12 հազար 7, նախորդ տարի՝23 հազար 674 զբոսաշրջիկ: Թուրքիայից Հայաստան եկած զբոսաշրջիկների թիվը եւս ավելացել է՝ 3740-ից դառնալով 9479: Նախորդ տարի մեր հանրապետություն ժամանել է 116 հազար 430 իրանցի զբոսաշրջիկ. այս ցուցանիշը մեկ տարում ավելացել է 27.5 տոկոսով:

ArmLur.am-ը պաշտոնական փաստաթղթից տեղեկացավ նաեւ, որ Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվն 2.2 անգամ ավելացել է. եթե 2021 թվականին ՀՀ ՌԴ-ից եկել է 351 հազար 801 քաղաքացի, ապա նախորդ տարի նրանց թիվը կազմել է 790 հազար 397: Ֆրանսիայից ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը եւս ավելացել է 62.9 տոկոսով: Ի դեպ, Հայաստան նախորդ տարվա ընթացքում ժամանել է Ադրբեջանի 5 զբոսաշրջիկ: Մեզ հայտնի դարձավ, որ ադրբեջանցիները երեք օր են մնացել Հայաստանում:

ԳՆԵՐԸ ԲԱՐՁՐԱՑԵԼ ԵՆ

Բանջարեղենի գները Հայաստանում շեշտակի բարձրացել են: Այս շուկայում թանկացում արձանագրել է նաեւ ՀՀ վիճակագրական կոմիտեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ բանջարեղենի շուկայում արձանագրվել է 18.7 տոկոս գնաճ, իսկ միրգը թանկացել է 7.4 տոկոսով: Կարտոֆիլն այս տարվա հունվարին, նախորդ նույն ժամանակահատվածի հետ համեմատ, թանկացել է 14.9 տոկոսով, իսկ, ահա, այս տարվա հունվարին, 2022 թվականի դեկտեմբերի համեմատ, հանրապետությունում արձանագրվել է կարտոֆիլի 10.1 տոկոս գնաճ: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ թանկացել են նաեւ գազարը, սոխը, ճակնդեղը:

Նշենք, որ կարտոֆիլի մեկ կիլոգրամն այսօր վաճառվում է 250-400 դրամով: Սրան զուգահեռ նկատենք, որ զգալի վարձրացել է տեղական վարունգի, պղպեղի, լոլիկի գինը: Հայկական քաղցր պղպեղի կիլոգրամը սկսում է 1800 դրամից եւ հասնում 5000 դրամի, իսկ կծու պղպեղի մեկ կիլոգրամը սկսում է 1600 դրամից, որոշ տեսակների կիլոգրամի արժեքը գերազանցում է 4000 դրամը: Լոլիկի գինը եւս բարձր է: ArmLur.am-ը տեղեկացավ, որ լոլիկի մեկ կիլոգրամի գինը սկսում է 2000 դրամից, հայկական չերի լոլիկի մեկ կիլոգրամը վաճառվում է 2400 դրամով, որոշ տեսակների գինը գերազանցում է 3000 դրամը: Տեղական «Նազրվան» վարունգի մեկ կիլոգրամը հասնում է 14 հազար դրամի: Մի սուպերմարկետում այն արժե 13900 դրամ, մյուսում՝ 13950 դրամ: Բարձր է նաեւ չերի վարունգի մեկ կիլոգրամի գինը. այն 2900-3000 դրամի սահմաններում է:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության առաջարկությամբ, իրականացրել է ուսումնասիրություն աջակցող միջոցների տրամադրման ոլորտում՝ դիտարկելով «Վերին եւ ստորին վերջույթների պրոթեզներ» եւ «Օրթեզներ» ապրանքային շուկաները:

Նախարարությունը, հավաստագրերի հիման վրա, տրամադրում է 92 անուն տարբեր աջակցող միջոցներ: Այս ուղղությամբ 2022 թվականին հատկացվել է շուրջ 2 միլիարդ դրամ: Առաջիկա տարիներին պլանավորվում է էլ ավելի մեծացնել ֆինանսավորումը:

Բարձրացված խնդիրներ՝

1. Աջակցող միջոցների տրամադրումը նախկինում կազմակերպվում էր պետական գնումների շրջանակներում: Հավաստագրային համակարգի անցումից հետո շահառուին տրամադրվում է հավաստագիր, որով նա ոլորտում գործող ցանկացած կազմակերպությունից կարող է ձեռք բերել իր աջակցող միջոցը: Հավաստագրի հետ շահառուին հայտնում են միայն կազմակերպությունների կոնտակտային տվյալները, ինչը թույլ չի տալիս շահառուներին համեմատական վերլուծության միջոցով կազմակերպությունների միջեւ ողջամիտ ընտրություն կատարել:

2. Նշվածի արդյունքում պրոթեզների եւ օրթեզների շուկաներում բացակայում է գնային մրցակցությունը. առկա է կենտրոնացվածության բարձր մակարդակ:

3. Ոլորտում գործունեություն ծավալողներն իրենց գործունեության համար ամենախնդրահարույցը համարում են մասնագետների պակասը:

Հանձնաժողովի կողմից մշակված առաջարկներ՝

1. Շահառուի կողմից աջակցող միջոցը ստանալու համար էլեկտրոնային հարթակի գործարկում, որը պետք է հնարավորինս շատ տեղեկատվություն տրամադրի կոնկրետ աջակցող միջոցի արտադրական գործընթացի եւ որակական հատկանիշների, ծագման երկրի, ինչպես նաեւ գնի վերաբերյալ: Միաժամանակ շահառուն հնարավորություն կունենա հավաստագրի գնից ավելի ցածր գնով աջակցող միջոց ձեռք բերելու դեպքում գումարի մնացորդը պահպանել օգտագործման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ուղղելով այն, օրինակ, վերանորոգման ծառայությունների ձեռքբերմանը:

2. Հավաստագրերի գնային արժեքի որոշման նոր համակարգի ներդրում, որի մեջ ներգրավված կլինեն ՄՊՀ-ն եւ ՊԵԿ-ը կազմակերպությունների գնառաջարկների տնտեսական իմաստով արդարացվածությունը եւ իրատեսականությունը դիտարկելու համար:

6 ԱՄԻՍ

ՔՆՆԻՉՆԵՐԸ ՉԵՆ ՀԱՐՑԱՔՆՆԵԼ ՎԿԱՆԵՐԻՆ

Փետրվարի 9-ին Երեւանում՝ Առաջին ատյանի դատարանում, դատավոր Տիգրան Ոսկանյանը որոշել է երկու ամսով երկարաձգել հայտնի գործարար, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոչոբելյանի հոր՝ Գրիշա Քոչոբելյանի առեւանգման գործով մեղադրվող, ԱԺ նախկին պատգամավոր, ՀՅԴ գերագույն մարմնի անդամ Սուրեն Մանուկյանի խափանման միջոց կալանքը:

Սուրեն Մանուկյանը դատավորի այդ որոշմամբ կալանքի տակ կմնա մինչեւ ապրիլի 11-ը: Դատավոր Տիգրան Ոսկանյանը այդ պաշտոնին նշանակվել է 2022 թվականին: Նշված քրեական գործով դատական նիստերը կայանում են փակ, լրագրողներին հնարավորություն չի տրվում դրանց մասնակցել: Սուրեն Մանուկյանը մտադիր էր այդ նիստում հրապարակել քրեական գործի համար կարեւոր նշանակություն ունեցող երկու տեսանյութ, սակայն դատավորը դա թույլ չի տվել՝ ասելով, որ դատական նիստում տեղի է ունենում խափանման միջոց կիրառելու քննարկում, ոչ թե դատաքննություն: Իրազեկ, հավաստի աղբյուրից ստացված տեղեկություններով՝ նշված քրեական գործով Իրանում անձ չի կալանավորվել, թեեւ նախկինում նախաքննական մարմինը հայտարարել էր այդ մասին: Բացի այդ, նախաքննական մարմինը Իրանից Հայաստան չի վերադարձրել այն 20 հազար եվրոն, որը ենթադրյալ առեւանգողը ստացել է Խաչատուր Քոչոբելյանի հորն ազատ արձակելու դիմաց: Ըստ իրազեկ աղբյուրի՝նախաքննական մարմինն Իրանից այդ գումարը չվերադարձնելը պատճառաբանել է նրանով, որ Իրանում վտանգավոր, նախապատերազմական իրավիճակ է:

Քննչական մարմինը դատարանում Ս. Մանուկյանի կալանքի տակ մնալը պատճառաբանել է այն հանգամանքով, որ քրեական գործով լրացուցիչ վկաների հարցաքննելու անհրաժեշտություն կա, Սուրեն Մանուկյանը, ազդեցիկ լինելով, կարող է ազդել այդ վկաների վրա: Հայտնի չէ, թե ովքեր են այդ լրացուցիչ վկանեը, նախաքննական մարմինը՝ այդ գործով 7 քննիչները, անցած 6 ամսում ինչո՞ւ չեն հարցաքննել այդ վկաներին: 2022թ. հուլիսի 27-ի առավոտյան, երբ Տավուշի մարզի Իջեւան համայնքի Աչաջուր գյուղում գտնվող իր առանձնատան մոտից Գրիշա Քոչոբելյանն առեւանգվել է, նրա տան տեսախցիկը թեքված է եղել, սակայն դա իրավապահները նկատել են միայն 3 օր անց՝ հուլիսի 30-ին. պարզվել է նաեւ, որ տեսախցիկի կառավարման կենտրոնը խափանված է եղել: Հուլիսի 27-ի առավոտյան Քոչոբելյանների առանձնատան աշխատողները աշխատանքի են ներկայացել ոչ թե սովորականի նման՝ առավոտյան ժամը 06:30-ին, կամ 07:00-ին, այլ ուշացումով՝ ժամը 08:30-ին: Նրանք սովորաբար առավոտյան աշխատանքի ուշ են ներկայացել, երբ նախորդ երեկոյան գործի տեղից՝ Քոչոբելյանների տնից, իրենց տները ուշ են վերադարձել, մինչդեռ հուլիսի 26-ին այդ բանվորներն իրենց տներն են գնացել ժամանակին՝ժամը 18:00-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿՅԱՆՔ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄՈ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ» ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔԸ՝ ՆՈՐ ՇՆՉՈՎ

«Համո Բեկնազարյան» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) պատկերագիրքն արվեստասերներին ծանոթացնում է նշանավոր կինոռեժիսորի, սցենարիստի, կինոդերասանի, «Հայֆիլմ» կինոստուդիայի հիմնադրի կյանքին ու գործունեությանը:

Պատկերագիրքը, որի շնորհանդեսը տեղի ունեցավ փետրվարի 10-ին Հայաստանի կինոգործիչների միության բուխարու սրահում, լույս է ընծայել «Անտարես» հրատարակչությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով եւ «Աջակցություն հոբելյանական նախագծերին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում: Պատկերագիրքը կազմել են Զավեն Բոյաջյանն ու Ռուզաննա Բագրատունյանը:

«Միշտ մտածել եմ, որ մենք Համո Բեկնազարյանին մատուցելու մեծ տուրք ունենք. շատ քիչ գրականություն է ստեղծվել նրա մասին, մինչդեռ պետք է մի ամբողջ գրադարան լիներ: Մտածեցի՝ շատ պարզունակ կլինի, եթե գիրքը կազմված լինի միայն պատկերներից եւ այդ պատկերների պրիմիտիվ մեկնաբանություններից, ուստի փորձել եմ այդ մակագրությունները վերածել ինքնակա տեքստերի: Գիրքը շատ հագեցած է ոչ միայն պատկերային նյութով, այլեւ տեքստերով: Հիմնականում շեշտադրել եմ Բեկնազարյանի հուշերը, երբ ինքն է պատմում իր մասին, որպեսզի նրա անձը, ինքնությունը ներկա լինեն գրքում»,-պատմում է Զավեն Բոյաջյանը:

Բոյաջյանը, Բեկնազարյանի հուշերից զատ, որոնք վերցրել է կինոռեժիսորի ինքնակենսագրական գրքից, պատկերագրքում օգտագործել է նաեւ Կարեն Քալանթարի՝ Բեկնազարյանին նվիրված մենագրությունից դրվագներ, կինոգիտության կարեւորագույն դեմքերի՝ Սաբիր Ռիզաեւի, Գրիգոր Չախիրյանի, Սուրեն Հասմիկյանի դիտարկումները:

Գիրքը հանրագիտարանային բնույթ ունի: Այն նաեւ ներկայացնում է առաջին տասնամյակների հայկական կինոն, նրա արշալույսը, հետագա տարիներն ու Բեկնազարյանի անցած ճանապարհը՝սկսած ծննդյան օրվանից մինչեւ մահ:

Գրքում տեղ գտած լուսանկարչական նյութի զգալի մասը հրապարակվում է առաջին անգամ: Լուսանկարների մեծ մասը տրամադրել է Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանը:

Ռուզաննա Բագրատունյանն էլ ընդգծում է, որ Բեկնազարյանի մասին պետք է տասնյակ գրքեր լինեին. ավա՜ղ, այդպես չէ: «Պատկերագիրքը փոքր, բայց շատ կարեւոր հատվածն է նրա մասին ամբողջ արխիվի, եւ ես հույս ունեմ, որ առաջիկայում այդ արխիվը լիարժեք կուսումնասիրվի գիտական տեսանկյունից, եւ գիտական գնահատական կտրվի, ինչը կարեւոր է սերունդների համար. կարեւոր է, որ Բեկնազարյանի ամբողջ ստեղծագործությունը հասու լինի բոլորին»,- նշում է Բագրատունյանը՝ շնորհավորելով նման գրքի հրատարակման առթիվ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արա Խզմալյանը Համո Բեկնազարյանին նվիրված գիրք հրատարակելու գաղափարը հղացել է դեռ 2019 թվականից: Գրքի լույս ընծայումն անձնական ձեռքբերում է համարում, որովհետեւ Համո Բեկնազարյանն ու նման անունները, ըստ Խզմալյանի, մեր ելքի վիզաներն են դեպի մեծ աշխարհ, մեծ իրականություն: «Նրանց ստեղծած ժառանգությամբ, նրանց գործունեության շնորհիվ մենք մուտք ենք գործել համաշխարհային մեծ ընտանիք, կարողացել ենք հայտնվել համաշխարհային մեծ գործընթացներում: Հաճախ մեր անփույթ վերաբերմունքը մեծ արժեքների հանդեպ զարմացնում է: Մենք ունենք երեւելի արժեքներ, որոնք իսկապես միջազգային նշանակություն ունեն կամ գոնե աշխարհին հետաքրքիր են որպես անհատներ, որոնք ապահովել են այս կամ այն երկրի մասնակցությունը համաշխարհային մեծ գործընթացներին: Համո Բեկնազարյանն այդ անուններից է»,- հավաստիացնում է փոխնախարարը:

Խզմալյանի խոսքով՝ տպագիր գիրքը չի կարող փոխարինվել որեւէ այլ բանով, սակայն նախատեսում են գրքի էլեկտրոնային տարբերակները տարածել ու դիրքավորել համաշխարհային տեղեկատվական հարթակներում:

Փոխնախարարը հիշեցնում է, որ 2023-ին նշվում է Արամ Խաչատրյանի 120-ամյակը, որի մասին շուրջ 5 տասնյակ գիրք կա, եւ հիմնականում՝ռուսերեն, որոնցում Խաչատրյանը ներկայացվում է որպես խորհրդային կոմպոզիտոր: Այլ լեզուներով ներկայանալի աշխատություն, պատկերագիրք չկա: «Նախարարության քաղաքական առաջնահերթությունն է այդ դատարկությունը լցնել անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ահռելի վավերագրական նյութ կա, որը պետք է թարգմանվի, հանրայնացվի, ինչը նաեւ ազգային արժանապատվության խնդիր է»,-ասում է Արա Խզմալյանը:

Երեկոն եզրափակվեց Գարեգին Ջաքոյանի «Համո Բեկնազարյան. մենախոսություն» ֆիլմի ցուցադրությամբ. ֆիլմ, որը Բեկնազարյան մեծ անհատի կյանքի ու գործի վավերագրությունն է:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

«ՆԿԱՐՉԻ ԵՐԵՔ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐԸ» ԿՑՈՒՑԱԴՐՎԻ

Կինոռեժիսոր, վավերագրող, Հայաստանի կինոգործիչների միության նախագահ, «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի հիմնադիրներից Հարություն Խաչատրյանի «Նկարչի երեք գերեզմանները» ֆիլմը կցուցադրվի Գյումրիում: Ֆիլմի Գյումրու պրեմիերան տեղի կունենա փետրվարի 18-ին «Հոկտեմբեր» կինոթատրոնում:

Ֆիլմը մի նկարչի մասին է, որի կյանքը եղավ ճակատագրական, եղավ առեղծվածային, եւ նրա կյանքի ու մահվան միջակայքում մնաց մի կյանք, որը լի է ընդհանրապես մարդու կյանքի, նրա ժամանակի, նրա ապրածի ու մահի մասին խորքային խորհրդածություններով, զգացմունքայնությամբ ու գաղտնագրումներով: Իր փիլիսոփայությամբ ֆիլմը հայ ժողովրդի ճակատագրի, նրա փախուստի ու վերադարձի, նրա ժամանակի ու նրա որոնումների մասին խոհական ընդհանրացում է՝ հարցերով, որոնք ունեն կամ չունեն պատասխաններ:

Ֆիլմի հերոսն առաջին անգամ հայտնվել է Հարություն Խաչատրյանի «Քամին ունայնության» կինոնկարում, ինչից հետո ավելի քան 30 տարի կինոռեժիսորը հետեւել է իր հերոսի կյանքի ու ճակատագրի վայրիվերումներին՝ ստեղծելով «Նկարչի երեք գերեզմանները» ստեղծագործությունը: Ֆիլմը, Երեւանից բացի, ցուցադրվել է Իտալիայում:

Առաջիկայում ցուցադրվելու է Բուլղարիայում, Ուկրաինայում եւ այլուր:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՐՊԱՍԱՊԱՀԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Բելգիական «Վինկել Սպորտ» սիրողական ակումբի 25-ամյա դարպասապահ Արնե Էսպիլը «Վեստրոզեբեկի» հետ խաղում իրեն վատ է զգացել, ապա՝կորցրել գիտակցությունը:

Դարպասապահը հետ է մղել 11-մետրանոցը, իսկ դրանից անմիջապես հետո՝ ընկել խոտածածկին: Խաղն անմիջապես դադարեցվել է, ֆուտբոլիստին՝ օգնություն ցուցաբերվել խաղադաշտում, կիրառվել է նաեւ դեֆիբրիլյատոր:

Չնայած սրան՝ հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին երիտասարդ դարպասապահի սիրտը կանգ է առել: Էսպիլի մահվան պատճառները պարզվում են:

«Սա մեզ համար մեծ ողբերգություն եւ շոկ է: Արնեն իր ամբողջ կյանքն անցկացրեց մեր ակումբում, նրան բոլորս շատ էինք սիրում: Նա հիանալի տղա էր, ընկերասեր եւ միշտ պատրաստ օգնելու: Սա իսկապես ծանր հարված էր, առաջին հերթին՝ նրա ընտանիքի եւ նաեւ մեզ համար»,- ասել է «Վինկել Սպորտ» ակումբի մարզական տնօրեն Պատրիկ Ռոտսարտը:

ԿՄԱՍՆԱԿՑԵՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

Հունաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանության նախաձեռնությամբ՝Հայաստանն առաջին անգամ կմասնակցի Սալոնիկի՝Helexpo-ում կայանալիք Detrop ցուցահանդեսին, որը հանդիսանում է Հունաստանի՝ գինու մասնագիտացված ամենակարեւոր իրադարձություններից մեկը:

Ցուցահանդեսում Quality Wines ընկերությունը կներկայացնի ArArAt, Zorah, Karas, ArmAs, Hin Areni, Oshin, Orran, Armenia Wine, Kilikia, Jermuk, Noyan ապրանքանիշները:

Ցուցահանդեսը տեղի կունենա փետրվարի 18-20-ը N8 կրպակի B30 տաղավարում:

Փետրվարի 19-ին՝ տեղական ժամանակով ժամը 18:00-ին, N15 տաղավարի գլխավոր բեմում տեղի կունենա Հայաստանի գինու պատմության հատուկ շնորհանդեսը:

ԳՎԱՐԴԻՈԼԱՆ ՌԵԿՈՐԴ Է ՍԱՀՄԱՆԵԼ

Անգլիական «Մանչեսթեր Սիթի» ֆուտբոլային ակումբի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան անգլիական Պրեմիեր լիգայի ռեկորդ է սահմանել:

Անգլիայի ֆուտբոլի առաջնությունում «Մանչեսթեր Սիթի»-ի ղեկին անցկացրած 250 խաղերից 184 խաղում Գվարդիոլան հաղթանակ է տոնել, ինչը ռեկորդային ցուցանիշ է:

Պրեմիեր լիգայի 23-րդ տուրում «Մանչեսթեր Սիթի»-ն մրցել է «Աստոն Վիլլա»-ի հետ եւ առավելության հասել 3:1 հաշվով:

Խոսեպ Գվարդիոլան «Մանչեսթեր Սիթի»-ի գլխավոր մարզչի պաշտոնը զբաղեցրել է 2016 թվականից: «Մանչեսթեր Սիթի»-ի հետ Գվարդիոլան 4 անգամ դարձել է Անգլիայի չեմպիոն:

● *Փետրվարի 15-ին Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Արծվաբույն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ինձնից գումար հափշտակելու գործը հասել է դատարան, բայց գումարս չեմ ստացել. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Գեղամ Գասպարյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե անձը տուժել է հանցագործության հետեւանքով, եւ նրանից խարդախությամբ գումար են հափշտակել, ապա տվյալ անձը քրեական գործով ճանաչվում է որպես տուժող եւ մասնակից դարձվում թե՛ քրեական գործի նախաքննությանը եւ թե՛ դատարանում գործի քննությանը: Քրեական գործի հարուցումից հետո տուժողն իրավունք ունի քաղաքացիական հայց ներկայացնել դատարանին՝ խնդրելով դատավճիռ կայացվելու դեպքում խարդախությամբ հափշտակված գումարը հետ գանձել ամբաստանյալից հօգուտ տուժողի: Նա դրանով իսկ կստանա նաեւ քաղաքացիական հայցվորի կարգավիճակ քրեական գործով: Քաղաքացիական հայցվոր է ճանաչվում քրեական գործով վարույթի ընթացքում հայց ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որի նկատմամբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ նրան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառվել է գույքային վնաս: Քաղաքացիական հայցվոր ճանաչելու մասին որոշում կարող են կայացնել հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը՝ կախված այն հանգամանքից, թե որ փուլում է գտնվում քրեական գործի քննությունը: Դատարանում գտնվող քրեական գործի քննության ընթացքում քաղաքացիական հայցի ներկայացման դեպքում տուժողին որպես քաղաքացիական հայցվոր ճանաչում է դատարանը:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացիական հայցն իր մեջ պետք է պարունակի Ձեզանից հափշտակված կոնկրետ գումարի չափը, որը ցանկանում եք, որ հետ գանձվի հանցագործություն կատարած անձից: Քաղաքացիական հայցը պետք է հասցեագրել այն դատավորին, որը քննում է քրեական գործը, իսկ օրինակները պետք է ուղարկեք ինչպես մեղադրանքը պաշտպանող դատախազին, այնպես էլ մեղադրվող անձանց:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ պարտպատել իմ տարածքը: Ումի՞ց պետք է թույլտվություն ստանալ:

Մանուկ Մարգարյան (54 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Համայնքի վարչական սահմաններում պարսպի կառուցապատման նպատակով ճարտարապետահատակագծային առաջադրանքը, կառուցապատման թույլտվությունները եւ այլ փաստաթղթեր տալիս է համայնքի ղեկավարը, իսկ Երեւանում՝ Երեւանի քաղաքապետը: Այդ նպատակով, նախ, անհրաժեշտ է դիմել համայնքի ղեկավարին կամ քաղաքապետին՝ խնդրելով տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նախագծելու համար Ձեր հողատարածքի պարսպի ճարտարապետական նախագիծը:

Դիմումին պետք է կցեք Ձեր անձնագրի պատճենը, սեփականության վկայականի եւ նշահարման ակտի պատճենները: Ճարտարապետահատակագծային առաջադրանքը ստանալուց հետո պետք է դիմել ցանկացած լիցենզավորված ճարտարապետական կազմակերպության՝ խնդրելով առաջադրանքին համապատասխան նախագծել պարսպի կառուցման սխեման եւ կազմել ամբողջական նախագիծ: Այնուհետեւ նախագիծը, որի մեջ ներառվում են նաեւ հողի հետ կապված Ձեր փաստաթղթերը, պետք է ներկայացնեք համայնքի ղեկավարին կամ քաղաքապետին՝ խնդրելով տալ շինարարական թույլտվություն՝ պարիսպը նախագծին համապատասխան կառուցելու համար, եւ միայն շինարարական թույլտվությունը ստանալուց հետո իրավունք կունենաք իրականացնել շինարարական աշխատանքներ:

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Դիմումների ձեւերը առկա են համայնքներում եւ քաղաքապետարաններում, եւ գործում է մեկ պատուհանի սկզբունքը. անհրաժեշտ է միայն փաստաթղթերով ներկայանալ եւ լրացնել դիմումները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Բռնցքամարտի Հայաստանի երիտասարդական առաջնությանը Գեղարքունիքի մարզից մասնակցել են 9 մարզիկներ, որոնցից 3-ը տուն են վերադարձել մեդալներով:

Ոսկե մեդալ է նվաճել Մարտունու մարզադպրոցի սան, 63 կիլոգրամ քաշային Լիլիթ Ասատրյանը:

Արծաթե մեդալ է նվաճել Ճամբարակի մարզադպրոցի սան, 75 կիլոգրամ քաշային Սմբատ Նազարյանը:

Բրոնզե մեդալակիրը եւս ներկայացնում է Ճամբարակի մարզադպրոցը. նա 54 կիլոգրամ քաշային Վեհմեր Մարտիրոսյանն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.02.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: